ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«ՍԹՈՒՆԳՐԱՆԴ» ՍՊԸ-ի կողմից նախատեսվող ՀՀ Արարատի մարզի Վեղի համայնքի Դաշտաքար բնակավայրի վարչական տարածքում գտնվող Վեղիի ավազի և կոպճագլաքարային խառնուրդի հանքավայրից՝ օգտակար հանածոյի հանքարդյունահանման ընդերքօգտագործման իրավունք ստանալու շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ առաջին հանրային քննարկում /1-ին լսում/ :

Վեղի համայնք Դաշտաքար բնակավայր: 15.08.2025 թ.

2025 թվականի օգոստոսի 8-ին ժամը 16:00-ին ՀՀ Արարատի մարզի Վեղի համայնքի Դաշտաքար բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում /գյուղ Դաշտաքար. Կենտրոնական 22/ տեղի ունեցավ «ՍԹՈՒՆԳՐԱՆԴ» ՍՊ Ընկերության /այսուհետ նաև՝ Ընկերություն/ կողմից ներկայացված ՀՀ Արարատի մարզի Վեղի համայնքի Դաշտաքար բնակավայրի վարչական տարածքում գտնվող Վեղիի ավազի և կոպճագլաքարային խառնուրդի հանքավայրից օգտակար հանածոյի հանքարդյունահանման ընդերքօգտագործման իրավունք ստանալու շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ առաջին հանրային քննարկում /1-ին լսում/:

Հանրային քննարկմանը մասնակցում էին ՀՀ Արարատի մարզի Վեդու համայնքապետարանի աշխատակազմի Գյուղատնտեսության և Բնապահպանության բաժնի պետ՝ Շ. Բաքոյանը, համայնքապետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ներկայացուցիչներ, Դաշտաքար բնակավայրի վարչական ղեկավար՝ Էդգար Ղազարյանը և գյուղի բնակիչներ, Ընկերության տնօրեն՝ Վահե Բաղդասարյանը և Ընկերության ներկայացուցիչներ՝ Հայկ Խաչատրյանը և փորձագետ՝ Մյասնիկ Բաղդասարյանը:

Հանրային քննարկումը /1-ին լսումը/ բացեց և խոսքով հանդես եկավ Վեդու համայնքապետարանի աշխատակազմի Գյուղատնտեսության և Բնապահպանության բաժնի պետ՝ Շ. Բաքոյանը, և հայտնեց, որ ՀՀ կառավարության 19.11.2014թ. թիվ 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով (այսուհետ նաև՝ Կարգ) կազմակերպվել և իրականացվում է Ընկերության կողմից ներկայացված ՀՀ Արարատի մարզի Վեղի համայնքի Դաշտաքար բնակավայրի վարչական տարածքում գտնվող Վեղիի ավազի և կոպճագլաքարային խառնուրդի հանքավայրից օգտակար հանածոյի հանքարդյունահանման ընդերքօգտագործման իրավունք ստանալու շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ առաջին հանրային քննարկում /1-ին լսում/:

Ղեկավարվելով Կարգի դրույթներով, Վեղի համայնքի ղեկավարի կողմից հանրային քննարկումների պատասխանատու է նշանակվել Վեդու համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ՝ Շ. Բաքոյանը :

Վեդու համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Շ. Բաքոյանը, նշեց, որ քննարկվող հարցի շուրջ 1-ին հանրային քննարկումն է /1-ին լսում/, վերջինս առաջարկեց ձեռնարկողին հանդես գալ համապատասխան զեկույցով, որից հետո կիրականացվեն քննարկումները:

Ելույթ ունեցավ Ընկերության ներկայացուցիչ, փորձագետ՝ Մյասնիկ Բաղդասարյանը, վերջինս ներկայացրեց ՀՀ Արարատի մարզի Վեղի համայնքի Դաշտաքար բնակավայրի

վարչական տարածքում գտնվող Վեդիի ավազի և կոպճագլաքարային խառնուրդի հանքավայրից օգտակար հանածոյի հանքարդյունահանման ընդերքօգտագործման շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ հարցեր, նշելով որ հայցվող տարածքի մակերեսը կազմում է 4.0 հա, որից հետո անցան քննարկման փուլին:

Ազդակիր Դաշտաքար բնակավայրի բնակիչ՝ Տարոն Մալխասյանը հարցեր ուղղեց Ընկերության ներկայացուցիչներին՝

1.Ողտեղ է գտնվում և ինչ տեղադիրք է զբաղեցնում հանքավայրը.

2.Հայցվող տարածքը հարակից է սեփականաշնորհումներին, ինչ ճանապարհից եք օգտվելու և արդյունահանումից առաջացած խորշերը արդյոք այդպես մնալու են, թե լցվելու են.

Հարցերին պատասխանեց Ընկերության ներկայացուցիչ, փորձագետ՝ Մյասնիկ Բաղդասարյանը հայտնելով, որ ընկերության կողմից հայցվում է 4.0 հա., մեքենաների շարժը կարգավորելու է հայցվող տարածքով, իսկ ինչ վերաբերվում է խորշերին, արդյունահանվող պաշարների սպառվելուց հետո կիրականացվի ռեկուլտիվացիա:

Հաջորդիվ ազդակիր Դաշտաքար բնակավայրի բնակիչ՝ Վասակ Մալխասյանը հարցեր ուղղեց Ընկերության ներկայացուցիչներին.

1.Ինչ ճանապարհից եք օգտվելու, քանի որ հարևանությամբ մեր սեփականաշնորհումն է:

Հարցին պատասխանեց Ընկերության ներկայացուցիչ, փորձագետ՝ Մյասնիկ Բաղդասարյանը հայտնելով, որ կառուցելու են նոր ճանապարհ, իսկ հումքը տեղում տեսակավորվելու է և նոր տեղափոխվելու:

Նախագահողը հարց ուղղեց արդյոք ազդակիր Վեղի համայնքի բնակիչների կողմից կան հարցեր, թե՞ ոչ: Հաշվի առնելով լսարանի դիրքորոշումը՝ հայտարարեց լսման ավարտ:

Կից ներկայացվում է մասնակիցների ցանկը՝ 1 թերթ և հանրային քննարկումների էլեկտրոնային կրիչը:

Վարող՝ Գյուղ. և Բնապահ. Բաժնի պետ՝ / / Շ. Բաքոյան

Նախաձեռնող՝ «ՍԹՈՒՆԳՐԱՆԴ»
ՍՊԸ-ի տնօրեն՝ / / Վ. Բաղդասարյան

STONEGRAND
ՍԹՈՒՆԳՐԱՆԴ
СТОУНГРАНД
04231969

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

«ՍԹՈՈՒՆԳՐԱՆԴ» ՍՊ Ընկերության կողմից ներկայացված ՀՀ. Արարատի մարզի Վեդի համայնքի Դաշտաքար բնակավայրի վարչական տարածքում գտնվող Վեդիի ավազի և կոպճազլաքարային խառնուրդի հանքավայրից՝ օգտակար հանածոյի հանքարդյունահանման ընդերքօգտագործման իրավունք ստանալու շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ հանրային քննարկում /1-ին լսում/:

գ. Դաշտաքար

08.08.2025թ.

Հ/Հ	Անուն, Ազգանուն	Զբաղեցրած պաշտոնը	Ստորագրություն
1.	[illegible]	[illegible]	
2.	[illegible]	[illegible]	
3.	[illegible]	[illegible]	
4.	[illegible]	բնակիչ	
5.	[illegible]	բնակիչ	
6.	[illegible]	բնակիչ	
7.	[illegible]	[illegible]	
8.	[illegible]	[illegible]	
9.	[illegible]	բնակիչ	
10.	[illegible]	բնակիչ	
11.	[illegible]	բնակիչ	
12.			
13.			
14.			
15.			
16.			
17.			
18.			
19.			
20.			